Երևան, 25.01.2021

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Համբարձում Մաթևոսյանին
«Հայաստանի Մարդկային Ռեսուրսների Ասոցիացիա»-ի նախագահ
Արփի Կարապետյանից

Հարգելի պարոն Մաթևոսյան,

սույն նամակով հայտնում ենք Ձեզ, որ 2021 թվականի հունվարին մեկնարկել է «Նոր Էջ» սոցիալական պատասխանատվության նախագիծը: Վերջինս միտված է աջակցելու այն անձանց, ովքեր մասնակցել են մարտական գործողություններին և զորացրվել են:

Ծրագրի շրջանակներում ընտրվելու են 18-30 տարեկան շուրջ 1.000 երիտասարդներ, որոնց հետ անցկացվելու են մասնագիտական հարցազրույցներ: Հիմնվելով ստացված արդյունքների վրա՝ կազմակերպվելու են մասնագիտական կողմնորոշման ծրագրեր, ուսուցման և զարգացման դասընթացներ՝ տարբեր մասնագիտական ուղղվածություններով: Այդ ծրագրերի շրջանակում երիտասարդները կկարողանան բացահայտել ու վերահիմաստավորել սեփական հնարավորությունները, ձեռք բերել հստակ հմտություններ աշխատաշուկա մուտք գործելու և լիարժեք կյանք վերադառնալու նպատակով:

«Նոր Էջ» նախագիծը համագործակցելու է շուրջ 500 կազմակերպությունների և կառույցների հետ, որոնց պահանջներից ելնելով, կձևավորվեն և կիրականացվեն ուսուցման, զարգացման և ուղղորդման թիրախային ծրագրեր:

Նախագիծը նախաձեռնել և մշակել է «Հայաստանի Մարդկային Ռեսուրսների Ասոցիացիա»-ն, և կյանքի կոչվելու հնարավորություն է ստացել «Ֆիլիպ Մորրիս Արմենիա» ընկերության աջակցությամբ: Ստեղծված իրավիճակում անկարելի է անտարբեր մնալ այն դժվարությունների նկատմամբ, որոնց առջև վերջին իրադարձությունների արդյունքում կանգնել են բազմաթիվ հայ երիտասարդներ:

Այսու, ակնկալում ենք Ձեզնից Ձեր հաստատակամությունը նախագծի իրականացման գործում և Ձեր աջակցությունը Ձեր մարզի՝ մարտական գործողություններին մասնակցած և զորացրված անձանց ներգրավման հարցում, ուղղորդելով համապատասխան կառույցներին/անձանց:

Հարգանքով՝
Արփի Կարապետյան
«Հայաստանի Մարդկային Ռեսուրսների Ասոցիացիա»-ի նախագահ

https://www.facebook.com/norejarm norejov@gmail.com +374 33 58 46 96

Ստորև ներկայացվում է ծրագրի մասնակցի համար նախատեսված գրանցման հղումը և ծրագրի ֆեյսբուքյան էջը, որոնք կարող եք փոխանցել համապատասխան անձանց գրանցման և հավելյալ տեղեկատվության համար.

- ***Գրանցման հղում՝*** **https://hrcommunity.am/hy/nor-ej-masnakic/**
- ***Ֆեյսբուքյան էջ՝*** **https://www.facebook.com/norejarmenia**